


10890

Ա.Վ.Ս.Բ.Ի Գ.ԲՍ.Գ.Ս.ԲՍ.Ե

№ 1.



Հրատարակություն Հ. Լ. Կ. Յե. Մ. Կենտ. Կոմ.-ին
կից պատանի պիոներների կենտ. բյուրոյի:

000
ՄՏ-ԿՅԺԲ

ԿՈՒՆԵՏԻՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԵՎԵՐԸ

Պիոներական աշխատանքի մեթոդների խնդիրը, այսինքն այն խնդիրը, թե ինչպես և ինչ ձևով պետք է տանել աշխատանքը, ինչպես պետք է հյուսել այդ աշխատանքը, վորպեսզի նա մի ամբողջություն կազմի և արդյունավետ լինի—ահա այս բոլորը վոչ միայն մութ հարցեր են, այլև այսորվա ամենացավոտ խնդիրներն են հանդիսանում: Յեւ այդ խնդիրները պետք է լուծել ուղղակի և վճռական կերպով: Վերջենք իրականությունն այնպես, ինչպես վոր նա կա:

Ամեն տեղից լսվում են բացականչություններ, թե պիոներները շատ են ծանրաբեռնված ամենօրյա աշխատանքի:

քով: Պիոններ-ղեկավարները հաճախ հայտարարում են, թե իրենց տրամադրած ժամանակը շատ քիչ է, և աշխատանք տանել դժվար է: Կոլլեկտիվները շաբաթական միջանի հավաքույթ են ունենում, կոլլեկտիվների խորհուրդներն առայժմ վերջնականապես չեն ձևակերպված, ողակները չեն աշխատում, չեն ցուցահանում բոլոր պիոներներին ինքնուրույն աշխատանքը (ինքնագործունեյությունը), պետք է սովորել կանոնավոր աշխատանքի...

Այդ բոլորին պետք է ավելացնել նաև այն, վոր վոչ մի տեղ հնարավոր չէ հայերեն լեզվով գտնել գրքեր կամ հոգվածներ այն մասին, թե ինչպես պետք է ղեկավարել կոլլեկտիվի, ողակների և կամ կոլլեկտիվի խորհրդի հավաքույթները: Պիոներական աշխատանքի հերթական և ամենակարևոր խնդիրներից մեկն է պարզորոշ կերպով սեփական աշխատանքի սխտեմի ցուցահանելը: Անհրաժեշտ է պարզ և վո-

րոշակի ասել, թե ինչպես պետք է մենք աշխատանքի բաժանում կատարենք կոլլեկտիվներում և ինչ միջոցներով լավագույն կերպով տանենք այդ աշխատանքը: Արդեն ժամանակն է, վոր այժմ, պիոներական շարժման V տարում, լուրջ կերպով մտածենք և մշակենք պիոներ կոլլեկտիվում աշխատանք տանելու սխտեմ:

Պիոներական շարժման նպատակն է պատանի սերունդը նախապատրաստել պայքարի, վոր մղվում է հանուն բանվորության գործի:

Պարզ է պիոներական աշխատանքի բովանդակությունը. այդ՝ ակտիվ մասնակցությունն է շրջապատող կյանքում:

Պիոներական միացման, նրանց կազմակերպչական ձևերը նույնպես պարզ են, հաստատուն, բնորոշ և յերեխաների համար թեթև:

Դրանք են—ողակ՝ 10 հոգուց, 40—50 հոգուց կոլլեկտիվ և ի. կ. Յե. Մ. Կոմիտեյին կից Պիոներ. Բյուրո:

Այժմ պետք է պարզել մեր աշխատանքի մեթոդը, մեր սխտեմը:

Կոլեկտիվներում աշխատանք տանելու սխտեմը բարելավելու համար մեզանում հավաքույթներ յերեք ձև ունեն առաջնակարգ նշանակութիւն:

Դրանք են՝ 1) Կոլեկտիվի խորհրդի հավաքույթ, 2) Ողակի հավաքույթ և 3) Կոլեկտիվի ընդհանուր հավաքույթ:

Ով ուզում է կռիւ ծանրաբեռնման դեմ, ով ուզում է կանոնավորել կոլեկտիվի աշխատանքը, նա պետք է առաջնորդի այդ սխտեմով. մեր աշխատանքների սխտեմը հենվում է շաբաթական առաջադրումների վրա. դա նշանակում է, վոր ամեն շաբաթ պիտաներների հետ միասին մշակվում են վորոշ աշխատանքներ և կատարվում է այդ կարճ ժամանակամիջոցում: Մի հարց է առաջանում.— ինչո՞ւ մենք կանգ առանք 7 որվա վրա: Բանն այն է, վոր յերկար ժամանակամիջոցը կամ ավելին նպատակահարմար

չէ մեզ: Պատճառները սրանք են.—

ա) Յերբ կոլեկտիվի խորհուրդը շատ աշխատանքներ է տալիս (թեկուզ հետաքրքիր) կատարելու յերկար ժամանակամիջոցում, յերեխաները շփոթվում են, խառնվում, և դրա հետ միասին աշխատանքները չեն կարողանում կատարել ժամանակին, վորի պատճառով և առաջանում է անհետաքրքրութիւն:

բ) Մի շաբաթվա ընթացքում համեմատաբար հեշտ է յերեխաների համար հաշվի առնել իրենց կատարած աշխատանքները, յերևան հանել իրենց բոլոր սխալները, բացասական և դրական կողմերը: Յերեք շաբաթվա կամ ավելի ժամանակամիջոցը թույլ չի տա նրանց այդ բանն անելու:

գ) Յերբորդն այն է, վոր մեր կովարների համար ևս հեշտ է ավելի շուտով մեկ շաբաթվա համար աշխատանք տալ որակներին, քան ավելի:

Այժմ կանգ առնենք կոլեկտիվի հա-

վաքույթները բովանդակության ու խնդիրների վրա, առանձին առանձին:

ԿՈՒԼԵԿՏԻՎԻ ԽՈՐՀՈՒՐԴ.

Կուլեկտիվի խորհրդի խնդիրներն ընդհանրապես կայանում են նրանում, վոր նա նախ պետք է սահմանի յուրաքանչյուր շաբաթվա համար աշխատանքներ, ողակների համար կազմի աշխատանքի ծրագիր ու ղեկավարի այդ աշխատանքները, ապա խորհրդի հավաքույթներում ողակավարներին նախապատրաստի ողակներում աշխատանքներ տանելու համար:

Կուլեկտիվի խորհուրդը վոչ միայն պետք է լսի ընդունելության և կարգապահության խախտման մասին հայտարարություններ, այլև գործնականորեն ողակավարների հետ ձեռք-ձեռքի, միասին մշակի մոտավոր աշխատանքների ծրագիրը, ինչպիսին են, որինակ՝ անապատանների ոգնության խնդիրը, շրջապատող անկազմակերպ յերեխաների հա-

մար յերեկույթների և մի շարք աշխատանքների կազմակերպման նախագիծ, և այլն:

Դրա հետ միասին ողակներին նա պետք է տա ամբողջ շաբաթվա աշխատանքի նախագիծ:

Կուլեկտիվի խորհրդում պետք է քննել նույնպես և ողակավարների դերի խնդիրը, կանոնավոր և ամենայն մանրամասնությամբ վերլուծության յենթարկելով նկատված սխալներն ու պակասությունները նրանց աշխատանքի ընթացքում:

Ողակների աշխատանքները սահմանելիս պետք է հաշվի առնել յուրաքանչյուրի կարողությունն ու առանձնահատկությունները, մատնանշելով ամեն մի ողակին կոնկրետ և պարզ անելիքներ, որինակ՝ կուլեկտիվի խորհուրդը հանձնարարում է առաջին ողակին ուսումնասիրել անապատանների կյանքը, յերկրորդին անապատանների և անկազմակերպ յերեխաների համար կազմակերպ-

վելիք յերեկոյթի համար պատրաստել
կողեկտիվ արտասանութիւնն և փոքրիկ
բուրգ, յերրորդին՝ գրել ու պատկերա-
գարգել պատի լրագիրը, չորրորդին՝ գրել
լոգունգներ ու նկարել փոքրիկ պլա-
կատներ, դիագրամներ:

Կարելի յե նաև բոլոր ողակներին հան-
ձնարարել սովորելու այս-ինչ յերգը կամ
խաղը, և այլն:

Կողեկտիվի խորհրդի պատվերները—
հանձնարարութիւնները գործնականա-
պես պետք ե ի կատար ածվեն ողակ-
ներում, վորի համար անհրաժեշտ ե,
վոր ողակավարները պատրաստված լի-
նեն: Սակայն ինչպես անել այդ մինչ
այժմ մեզ մոտ այսպես եր.— կողեկտի-
վի աշխատանքների կանոնավոր ընթաց-
քի համար, պիտոնե աշխատողների մի
մասը կազմում եր ողակավարների ա-
ռանձին դպրոցներ, այսպես կոչված՝
ակտիվիստների դպրոցներ:

Նման դպրոցների շատ փորձերը
ցույց տվին գործի նման ձևով դնելու

անմտութիւնն ու սխալը: Չի կարելի
այդ ձևով աշխատանք տանել. պետք
չե, վոր ստեղծվեն առանձին դպրոց-
ներ. դրանով մենք փչացնում ենք թե
կողեկտիվի աշխատանքները, և թե
ստեղծում պիտոնե չինովնիկների ա-
ռանձին մեկուսացած խմբեր:

Յերբ ողակավարների համար ստեղծ-
վում են նման դպրոցներ, այդ դեպ-
քում կողեկտիվի խորհուրդը վերած-
վում ե «Ժողովներով» զբաղվող ցա-
մաք ու կենսագուրկ (անկյանք) մի
որգանի: Ողակավարներին ողակներում
աշխատանքի նախապատրաստելու գոր-
ծը չի կարելի կտրել ու առանձնացնել
կողեկտիվի խորհրդի աշխատանքներից:
Կանոնավոր աշխատող պիտոնեական
կողեկտիվի խորհրդում վոչ միայն պետք
ե քննվեն ընթացիկ գործեր, այլ և հենց
այստեղ ողակավարներին պետք ե տըր-
վեն պատվերներ, վորոնց մշակումը
հարկավոր ե կատարել այդ իսկ խոր-
հրդի հավաքույթում:

Գործնականում այդ ահա թե ինչ է նշանակում:

Ողակավարներին պատվիրվում է մի շաբաթվա ընթացքում իրենց ողակներում անցնել այս-ինչ մարզանքը. այդ նույն մարզանքի հիմնական ձևերը կուլեկտիվի խորհրդում կուլարի ղեկավարութեամբ կատարվում են գործնականապես, վորից հետո արդեն ողակավարները պատրաստված գնում են իրենց ողակները: Կամ պատվիրվում է կուլեկտիվի հետևյալ հավաքույթին ողակներին գիտենալ այս-ինչ խաղը. — ողակավարները տեղն ու տեղը սովորում են այդ խաղը և ապա գնում յուրացնել տալու իրենց ողակներին: Նույնը կարելի է ասել և յերգերի վերաբերյալ:

Յեթե վոչ ամբողջապես, գոնե պաշտեղի առաջադրումի խոշոր մասը հիմնականում պետք է իրենց, ողակավարներին, գործնականապես մշակել տալ խորհրդի հավաքույթում, վորից հետո

միայն նրանք կարող կլինեն նույնը անցկացնել ողակներում:

Սորհրդի բոլոր աշխատանքները պետք է հաշվեառման յենթարկել, վորի համար հարկավոր է ունենալ խորհրդի որագիր (հուշատետր), վորը տանելու է նրա անդամներից մեկն ու մեկը, ավելի շուտ քարտուղարը:

Կուլեկտիվի խորհրդի հավաքույթները շաբաթական մեկ անգամից ավել չպետք է լինեն, ինչպես և $1\frac{1}{2}$ —2 ժամից ավել չպետք է տևեն:

Կուլեկտիվի խորհուրդը սրա հետ պետք է լինի ղեկավարող, հաստատուն, ճկուն մի որգան, վորի ուղղակի պարտականությունն է վոչ միայն ղեկավարել ընդհանրապես կուլեկտիվի կյանքը, այլև յուրաքանչյուր հերթական աշխատանքի ժամանակ նախապատրաստել ողակների համար աշխատանքներ և պատրաստել ողակավարներին այդ աշխատանքները հաջող իրագործելու համար: Նման աշխատանքի հե-

տեանքով միայն հաջողութեամբ կընթանան աշխատանքներն ամբողջ կողմէ կտրուի:

ՈՂԱԿԱՅԻՆ ՀԱՎԱՔՈՒՅԹ.

Բայց ի՞նչ է արվում ողակային հավաքութեաներում:

Ամբողջ շաբաթվա ընթացքում տեղի յետեւնում կողմէ կտրուի խորհրդի կողմից առաջադրված աշխատանքների իրագործումը: Այդ աշխատանքը կատարվում է ողակավարների անմիջական ղեկավարութեամբ:

Ողակների ամբողջ աշխատանքը պետք է բաղկանա հետևյալ մասերից. —

1. Փիզկուլտուրա — մարմնի յուրաքանչյուր մասի մարզումն, ազատ շարժումներ, բուրգեր, խաղեր, ցատկումներ, առողջապահութեան ուսումնասիրութիւնն ու կիրառում:

2. Զրույցներ ըստ կարմիր որացույցի, կամպանիաների, գրույցներ՝ կապված ողակի տոնրյա աշխատանքների

հետ, գրույցներ պիտներներին հետաքրքրող ընդհանուր հարցերի շուրջը:

3. Աշխատանքային դաստիարակութիւն. — Աշխատանքներ պիտներական ակումբի սպասավորման ու կահավորման, աշխատանքային ոգնութիւնն Կոմյետիտմիութեան բջիջին, մանկատան, գյուղացիութեան, և այլն:

4. Յերգեր յեւ կողմէ կտրուի ընթերցումներ:

5. Հասարակական աշխատանքներ. — Կապ Կոմյետիտ. Կ. կուսբջիջի, տեղի և այլ կողմէ կտրուի հետ, կարմիր բանակի հետ, մասնակցութիւնն կամպանիաներին, ազիտացիա ընտանիքում և դպրոցում, աշխատանք անապատան և անկազմակերպ մանուկներին շրջանում, շեփութիւնն գյուղական ողակի վերաբերմամբ, և այլն:

Յուրաքանչյուր ողակ առանձին այդ բոլորը միանգամից, իհարկէ, չի կարող կատարել. նա պետք է իր վրա վերցնի հասարակական աշխատանքի

միայն մի մասը (որինակ՝ շեֆություն, կապ կարմիր բանակի հետ), ապա մի-
առժամանակից փոխանակի մեկ ուրիշ
ողակի հետ:

6. Կուլտ-կրթական աշխատանք. —
Ցուցահանդեսների այցելումներ, զըր-
քերի ու լրագրների ընթերցանություն,
մասնակցություն կոլլեկտիվի պատի
լրագրի հրատարակման, ղրտողություն
և ծանոթություն բնության հետ, և այլն:

7. Եկակորսիաներ յեվ գրոսանքներ
դեպի բնություն, գործարաններ, գյու-
ղեր, ցուցահանդեսներ, և այլն:

8. Ողակի անվան ուսումնասիրություն:

Այդ բոլոր տարրերը պետք է մտնեն
ողակի հավաքույթի մեջ, իհարկե, վոչ
միանգամից:

Հաստատուն դարձած կոլլեկտիվում
յուրաքանչյուր ողակ կարող է ունե-
նալ շաբաթական վոչ ավել, քան յեր-
կու հավաքույթ, 1¹/₂ 2 ժ. տեղու-
թյամբ, ցանկացած տեղում և ցանկա-
ցած ժամանակ, այդ արդեն կախված

ե իրեն ողակից: Ողակն այդ հավաքույթ-
ները պետք է ողտագործի զրույցի,
ֆիզկուլտուրայով զբաղվելու, հերթա-
կան կամպանիային նախապատրաստ-
վելու, կոլլեկտիվի անկյանը նյութեր
պատրաստելու, խաղերի, պիոներական
սովորությունների ու կանոնների ըն-
թերցանության և այլ զբաղմունքների
համար:

Ողակի հավաքույթը կարելի յե յեր-
բեմն ամբողջովին նվիրել մի հատուկ
աշխատանքի, որինակ՝ գյուղի այցելու-
թյան, ահումբի կահավորման և այլն:

Կարելի յե նաև հավաքույթի մի մա-
սը նվիրել նման աշխատանքների, մյու-
սը անցկացնել ահումբում: Այսպիսով
ողակները կզբաղվեն կոլլեկտիվի խոր-
հըրդի տված պատվերների—առաջա-
դրումների կատարման ամենուրյա աշ-
խատանքներով:

Ողակային հավաքույթները հանրա-
պես պետք է լինի լիակատար, հետա-
քըրքրական և արտունակի կըմեջ մեծ

1003
12873



չափով գործնական աշխատանքներ։
Ողակային հավաքույթները պետք է
տեղի ունենան ողակավարի ղեկավա-
րությամբ, վորը և պատասխանատու
յե այդ աշխատանքների համար։

Զրույց կազմակերպելու կամ վոր-
ևե ուրիշ աշխատանքի մեջ ոգնե-
լու նպատակով կարելի յե հրավիրել
ավագ ընկերների՝ կուս-ընկերոջ, կոմ-
յերիտականի կամ ուսուցչի։ Կողմարը
գալով ողակ, չպետք է խառնվի անմի-
ջականորեն նրա ներքին գործերի մեջ,
այլ, յեթե պահանջ լինի, կարող է ցուց-
մունքներ տալ ողակավարին և այն
եւ խորհրդի հավաքույթում։

Ողակի ամբողջ աշխատանքը պետք
է հաշվի առնել և արձանագրել կողբեկ-
տիվի անկյունում, կողբեկտիվի պատի
լրագրում, ողակի որագրում (հուշա-
տետրում) և կողբեկտիվի ընդհանուր
հավաքույթում։ Ողակի հուշատետրը
պետք է գրեն ողակի բոլոր անդամները
հերթով, վորպեսզի յուրաքանչյուրը

սովորի հաշիվ տալ և արձանագրել ո-
ղակի աշխատանքները։

Որագիրը թե իր բովանդակությամբ
և թե իր արտաքին տեսքով չպետք է
լինի չոր ու ցամաք, այլ պետք է զար-
դարվի նկարներով, լուսանկարներով,
դիագրամներով, և այլն։

Վորպեսզի ողակը կարողանա լավ աշ-
խատել,

1. Ողակը պետք է լինի սերտ միա-
ցած, բոլորը պետք է կարողանան կոլ-
լեկտիվ կերպով աշխատել և փոխա-
դարձաբար իրար ոգնել։

2. Բոլորը պետք է մասնակցեն աշ-
խատանքներին։ Ողակի մեջ չպետք է
գտնվի մեկը, վոր շահագրգռված չլինի
աշխատանքներով, ողակի հավաքույթ-
ները պետք է տեղի ունենան այնպես,
վոր ողակի բոլոր անդամները ակտիվ
մասնակցություն ունենան։

3. Ողակը չպետք է առանձնացած
կյանք վարի ու աշխատի միայն իրեն
համար։ Բոլոր պիտներները պետք է

հիշեն, վոր նրանց մեծ կոչումը կայանում է նրանում, վոր նրանք աշխատանք տանեն անկազմակերպ պատանիներէ շրջանում, ոգնության զնան կոմյերիտմիության, Կոմ. կուսակցության և խորհրդային իշխանության:

Այսպես, ուրեմն, պետք է ձեռնարկել ողակի աշխատանքների կարգավորման: Վատ է այն պիոները և պիոներ աշխատողը, վոր շահագրգռված չէ դրանով:

ԿՈՒԼԵԿՏԻՎԻ ՀԱՎԱՔՈՒՅԹ.

Կուլեկտիվի հավաքույթ պետք է ունենալ պարբերաբար և պիոներների համար ազատ որերին:

Այդպիսի որ ավելի լավ է ընտրել կիրակին:

Յեթե կուլեկտիվի հավաքույթը տեղի ունենա յերկու շաբաթը մեկ կամ ավելի, պիոներները աշխատանքի խթան և վոգեւորություն չեն ունենա:

Իսկ յեթե հավաքույթը հաճախ հրավիրվի (ինչպես, որինակ, մեզ մոտ դեռ

շատ տեղերում հրավիրվում է շաբաթը 3-4 անգամ), այդ դեպքում պիոներները կծանրաբեռնվեն, կհոգնեն, և նրանց մեջ կարող է բուռն զնեւ անտարբերություն դեպի աշխատանքը, անհետաքրքրություն:

Վերջինս բնավ չպետք է թույլ տալ: Ամենահարմարն այն է, վոր կուլեկտիվի հավաքույթը հրավիրվի շաբաթվա մեջ մեկ անգամ: Հավաքույթի տեղը պետք է վորոշել նախորոք, վորպեսզի յուրաքանչյուր պիոներ գիտենա, թե ուր պիտի գա:

Հավաքույթի ծրագիրը պետք է լինի բազմատեսակ, շարժուն ու համապատասխանի պատանու հասակին: Յերբեք չպետք է թույլ տալ, վոր հավաքույթն զբաղվի միայն գեկուցումներ, դասախոսություններ լսելով կամ մարզանքի «պարապմունքով». այդպիսի հավաքույթները ցամաքեցնում են պիոներներին, փչացնում ամբողջ աշխատանքը, ձանձրութեւն անաշայնում, և այլն:

Պիոններական կողմերի վրա յերբեք չպետք է աշխատանքի ձևը մեքենայորեն ընդորինակի կուս. կամ կոմյերիտ. բջիջներին: Այն, ինչ վոր թույլատրելի է անհրաժեշտ է հասակավորներին, անթույլատրելի է ուժերին վեր է փոքրահասակների համար: Հարկավոր է, վոր կողմերի վրա հավաքույթի ծրագիրը բազմորինակ լինի, վոր պատանին կարողանա փոփոխակի ոգտագործել իր մարմնի բոլոր զգայարաններն ու անդամները: Պետք է այնպես անել, վոր հավաքույթի ժամանակ յերեխաները և՛ թռչկոտեն, և՛ վազվզեն, և՛ յերգեն, և զրուցեն ու մի վորևէ պրակտիկ գործ կատարեն:

Յեւ վոր մի դեպքում կողմերի վրա հավաքույթը չպետք է վերածել ֆիզկուլտուրայով զբաղվելու միապաղաղ «պարապմունքի» կամ «գասախոսությունների»: Յուրաքանչյուր անգամ կողմերի վրա հավաքույթը պետք է տարբեր լինի նախորդին և նրան չնմանի:

Յեթե նախորդ հավաքույթն սկսվել է յերգով և վերջացրել զրույցով, հետեւյալը պետք է սկսել մեկ ուրիշ բանից, որ՝ խաղով և տանել մի այլ ընթացքով:

Կրկնողությունը ձանձրացնում է պիոներներին և աշխատանքը դարձնում անկենդան: Կողմերի վրա հավաքույթը բոլոր պիոներների հավաքույթն է, ուր տեղի յեն ունենում միասնական ընդհանուր խաղեր, յերգեր, զբոսանքներ և այլ զբաղմունքներ:

Մանր խնդիրները, ամենորյա և այլն, քննվում են և ստանում լուծում ողակային հավաքույթներում, այնպես կրտացվեր ժամանակի և պիոներական յեռանդի անտեղի վատնում:

Շատ կարևոր խնդիր է կողմերի վրա հավաքույթների ծրագիր մշակելը: Բուն ծրագիրը և նրա բաղադրիչ մասերը պետք է վաղորոք, մինչև հավաքույթն արդեն կազմված լինեն:

Այդ ծրագրի կազմելը կախված է նրանից, թե ինչ խնդիրներ ու հանձնարա-

ըություններ են տված ողակներին ընթացիկ շաբաթվա համար կոլեկտիվի խորհրդի կողմից: Կոլեկտիվը հավաքվում է վաղ թե նրա համար, վոր պատահական բաներով զբաղվի, անի՝ ինչ ուզում է, միայն թե ուրախ անցնի. վոչ, կոլեկտիվի հավաքույթում պարզորոշվում է, ընդհանուր հայտարարի յե բերվում այն ամենը, ինչով ողակներն զբաղվել են տվյալ շաբաթվա ընթացքում:

Կոլեկտիվի հավաքույթում բոլոր պիտանեքները միասին խաղում են այն բոլոր խաղերը, վոր արդեն սովորել են ընթացիկ շաբաթում իրենց ողակներում, նրանք ցույց կտան այն բուրգն ու ազատ շարժումները, վոր անցյալ շաբաթում յուրացրել են ողակում, կոլեկտիվի հավաքույթում նրանք կերգեն այն յերգը, վոր ողակներում արդեն պատրաստել են, և այլն:

Իսկ զրույցի համար կարելի յե վերցրնել այնպիսի թեմաներ, վորոնց մշակման նվիրվելու յե յեկող շաբաթը, և կամ

թե այնպիսիները, վորոնք հիմնավորելու յեն անցածը:

Այսպիսով կոլեկտիվի տրաքանչյուր հավաքույթ պետք է լինի ընթացիկ շաբաթվա՝ կատարած ամբողջ աշխատանքների ստուգումը, հաշվառումը:

Ինչպես տանել կոլեկտիվի հավաքույթը, վորտեղից սկսել:

Սկսել պետք է յերգով, գործողություններով, կոլեկտիվ բացականչություններով, մի խոսքով՝ կենդանացնող, աշխուժ տվող մի բանով:

Հավաքույթի ծրագիրը, չնայած իր բազմազանությանը, չպետք է կարկատածի բնույթ կրի կամ կազմվի պատահաբար, առանձին-առանձին, իրար հետ վոչ մի կապ չունեցող կտորներից:

Պիտեքական կոլեկտիվի հավաքույթի ծրագիրը պետք է լինի ամբողջական, իրենից ներկայացնի մի ընդհանուր գաղափարի միացում, մի փոքրիկ կոմպլեքս: Յուրաքանչյուր պիտեք-աշխատող պետք է ձգտի, վոր հավաքույթի

ծրագրի տարրերը հետապնդեն մի նպատակ:

Հավաքույթը Հպետք է 2-2¹/₂ ժամից ավել տևի. կոլլեկտիվի հավաքույթը կարելի չէ նույնպես միացնել մի վորեն հասարակական աշխատանքի կիրառման հետ, որ՝ կիրականորյակի կազմակերպման, և այլն: Այդ դեպքում կոլլեկտիվի հավաքույթի ծրագիրը կարելի չէ թեթև կերպով կրճատել: Կոլլեկտիվի հավաքույթի ընդհանուր ղեկավարութունն ընկնում է կոլվարի վրա, վորպես բոլոր պիոներների անմիջական ղեկավարի: Իր աշխատանքի հաշվետու ման համար կոլլեկտիվը պետք է ունենա հուշատետր:

Այսպիսով ամեն կերպ պետք է հետևել կոլլեկտիվի աշխատանքի այդ ձևին, քանի վոր վերջինս ամենաճիշտն է: Կոլլեկտիվի ամբողջ աշխատանքները հենված են յերեք սյուների վրա:

Առաջին սյունը՝ այդ խորհրդի կանոնադրը հավաքույթն է,

Յերկրորդը—ողակի հավաքույթը,

Յերրորդը—կոլլեկտիվի ընդհանուր հավաքույթը:

Վե՛ թե խախտել, այլ ամրացնել պետք է այդ յերեք սյուները.—ահա նպատակը յուրաքանչյուր պիոների և պիոներ-աշխատող կոմյերիտականի:

ՂԵՆԱՎԱՐԻ ԴԵՐԸ ԿՈՂԼԵԿՏԻՎՈՒՄ.

Միջանի ղեկավարներ շատ են սիրում ամբողջ գլխավոր և ղժվար աշխատանքներն իրենք կատարել: Յերեկույթ պետք է կազմակերպել—ղեկավարն ինքն է մշակում ծրագիրը, ընտրում պիեսը և կատարում դերերի բաժանում: Յեվ կամ պետք կա ակումբը կարգի բերելու, լոգոնգներ գրելու, և այլն—կրկին ղեկավարն է միայն գործի կաշու: Հենց որինակ վերցնենք պատի լրագիրը, տեսնում ես՝ ղեկավարն է գրում հոգվածները, պատկերազարդում լրագիրը և կպցնում պատին:

Յեվ այդ յեղանակով աշխատողները

վոչ թե վատ ղեկավարներն են, այլ, ընդհակառակը, մեծ մասամբ լավ պիտո-ներնեը, աշխատանք սիրող և ակտիվ աշխատող: Նրանց ամբողջ դժբախտու-թյունը և թերությունը կայանում է հենց նրանում, վոր այդ բոլորն իրենք են կատարում: Նման կոլլեկտիվի գլխա-վոր դերակատարը ղեկավարն է հան-դիսանում: Սակայն այդ չե ուղիղը:

Պիտներական կոլլեկտիվի մեջ գլխա-վոր դերակատար հանդիսանալու յե վոչ թե ղեկավարը, այլ պիտներնեը: Այն ամբողջ աշխատանքը, վոր սահման-ված է կոլլեկտիվի համար, իրենք պի-տներնեը պիտի կատարեն:

Ղեկավարը հանդիսանում է պատանի-ների ինքնագործունեյությունը կազ-մակերպողը միայն: Նա չե լավ ղեկա-վար, ով լավ աշխատել գիտե (իհարկե, ամեն մարդ պետք է լավ աշխատանք տանել կարողանա), այլ նա, ով գիտե լավ կազմակերպել պիտներնեը աշխա-տանքն այնպես, վոր նրանք կարողա-

նան իրենք և՛ ծրագրել, և՛ կազմակեր-պել, և՛ կատարել:

Ղեկավարը պետք է պիտներնեը միտքն ու գործունեյությունն ուղղի դեպի այս կամ այն կողմը:

Իհարկե, յերբեմն այս կամ այն աշ-խատանքը պահանջում է ղեկավարի միջամտությունը: Գործնականում այդ տեղի յե ունենում շատ հաճախ, բայց պետք է այդ միջամտությունը կատա-րել առանց վորևէ ճնշման պիտներնեը նկատմամբ այնպես, վոր նրանք չզգան, թե այդ բղիւղում է վերից և իրենց կամքին հակառակ է: Բացառիկ դեպքե-րում պետք է պիտներնեը վրա ազդել այնպես, վոր նրանք իրենք նկատեն, թե ձեր առաջարկը լավի է և ձեռնտու իրենց:

Յերեսխաների ձգտումը ընդորինա-կելու (նմանեցնելու)՝ բոլորին հայա-նի յե:

Մենք լավ գիտենք, թե վորքան վա-րակիչ է յերեսխաների համար վատ

որինակը: Բայց պակաս վարակիչ չե
նաև լավ որինակը: Այն ամենը, ինչ
վոր նրանց դուր ե գալիս ուրիշ մարդ-
կանց կյանքից, արարմունքից և ար-
տաքինից, իսկույն աշխատում են ըն-
դորինակել: Հատկապես մեծ նշանա-
կություն ունի այդ ուղղությամբ ծա-
նոթների, ընկերների և մոտ մարդկանց
ազդեցությունը:

Վոչ մի զարմանալու բան չկա, վոր
այդ խնդրում դեկավարի դերն առանձ-
նապես շատ մեծ ե: Չե՞ վոր դեկավարը
նրանց ավագ ընկերն ե, նրանց առաջ-
նորդը: Նրա խոսքն իր պիոներների հա-
մար մեծ մասամբ ամենալավ հեղինա-
կությունն ե: Նրանք բոլորը ձգտում
են դառնալ այնպես, ինչպես վոր նա
յե: Ղեկավարի որինակելի լինելը պետք
ե հանդիսանա իր պիոներների դաս-
տիարակության միջոցներից մեկը.
որինակելի լինելն, իհարկե, պիտի հաս-
կանալ լավ արարքներով:

Ծխող և հայհոյող դեկավարն այդ

ուղղությամբ յերբեք լավ ազդեցու-
թյուն չի ունենալու պիոներների վրա:
Յեթե պիոներներից մենք պահանջում
ենք չծխել և չհայհոյել, այդ դեպքում
մենք ևս պետք ե խոստովենք դրանից:

Վերցնենք մի որինակ. —

Մենք ցանկանում ենք յերեխաների
մեջ կոլլեկտիվիզմ պատվաստել: Մենք
կուվում ենք անհատականության տրա-
մադրությունների և ձգտումների դեմ:
Այդ նպատակով մենք հնարում ենք և
նախաձեռնում մի շարք միջոցներ, սա-
կայն մեր անհատական կյանքում լի-
նում ենք վոչ թե կոմյերիտական, այլ
մոլեռանդ անհատական: Այդ դեպքում
մեր աշխատանքի արժեքը դրոշի՞ յե
հավասար:

Վերցնենք մեկ ուրիշ որինակ ևս. —
դեկավարն իր պիոներների հետ հաճախ
խոսում ե աշխատանքի և շրջապատող
կյանքին ակտիվ մասնակցելու մասին,
իսկ ինքն այդ աշխատանքի և կյանքի
նկատմամբ պասսիվ դիրք ե բռնում:

կարող ե նա պիտներններին լավ որինակ
ծառայել:—Իհարկե վոչ:

Որինակելի, վորպես կոմյերիտական,
որինակելի, վորպես պիտներ, որինակե-
լի աշխատանքի ասպարիզում և, վեր-
ջպես, որինակելի անհատական կյան-
քում ու արարքներում—ահա թե ինչ
պիտին պետք ե լինի պիտներական
կոլլեկտիվի ղեկավարը:

Վորպեսզի կարողանաս յերեխաների
հետ աշխատել, պետք ե գիտենաս
նրանց մոտենալու յեղանակը:

Այդ շատ անհրաժեշտ ե:

Լավ պիտներ-ղեկավարը վատից հենց
նրանով ե տարբերվում, վոր գիտե
յերեխաներին մոտենալու ձևը:

Ղեկավարը պիտների ընկերը պետք ե
լինի:

Սկսուտիցմի ամենավատ ժառան-
գություններից մեկը հանդիսանում ե
այն, վոր մեր կոլլեկտիվների ղեկա-
վարների խոշոր մասը ձգտում ե իրեն
պետ ցույց տալ:

Նրանց կարծիքով իզուր չե, վոր պի-
տներական կազմակերպությունը ռազ-
մական ե համարվում, ունի առանձին
կարգապահություն, ունի վոչ թե ըն-
տրովի այլ նշանակովի ղեկավարներ:

Նման ղեկավարներն իրենց պիտներ-
ներից պահանջում են յենթարկվել իրենց
առանց հակաճառելու, ոտարանում են
նրանց, իրենց մոտեցնելով ողակավար-
ների մի մասը կամ առանձին պիտներ-
ների, և այդպիսով աշխատանքի մեջ
մտցնում են մի շարք ձևականություն-
ներ:

Աշխատանքի նման ըմբռնումը և մո-
տեցումը մեզ խոշոր չափով փաստում
են: Այդ ղեկավարների նպատակը պետք
ե լինի իրենց փառասիրության և ին-
քնասիրության հաղթահարումը: Այ-
նուհետև նրանք պետք ե հասկանան,
վոր մեր կազմակերպությունը ռազ-
մական ե համարվում վոչ թե նրա
համար, վոր նա զինվորական ե (նա
յերբեք զինվորական չի յեղել և չե),

այլ վորովհետև նա քաղաքական յեւ
կոմմունիստական կազմակերպությունն ե:

Պիոներական կարգապահությունը
միանգամայն ընկերական ինքնակար-
գապահությունն է, վոր վոչ մի կապ
չունի զինվորականի հետ:

Ինչ վերաբերում է ղեկավարների
նշանակովի լինելուն, այդ այն պատ-
ճառով է, վոր պիոներական կազմա-
կերպությունն ապահոված լինի կոմ-
յերիտմիության ազդեցությամբ և ղե-
կավարությամբ:

Ղեկավարների մի մասը նայում են
իրենց վրա վորպես ուսուցիչների:
Նրանք կարծում են, վոր իրենք կոչ-
ված են սովորեցնելու, իսկ պիոները՝
լսելու և սովորելու:

Ղեկավարների այդ մասը սիրում է
պիոներների հետ խոսել դաստիարակի
տոնով:

Ղեկավարը վոչ թե հրաման արձա-
կող ռազմապետ է և կամ ուսուցիչ,
այլ ամենից առաջ բոլոր պիոներների
ընկերը:

Իր տարիքով պիոներներին շատ հե-
ռու չանցած՝ ինքը դեռ դաստիարակ-
վող մեր կոմյերիտականը նրանց նկատ-
մամբ բան լինել չի կարող, բայց յե-
թե միայն ընկեր

Ղեկավարը պիոներներին աշխատակից
ընկերն է, նրանց ընկերն է նա կյանքում
և խաղերում: Իզուր չէ, վոր պիոներ-
ները ղեկավարի հետ դու-յով են խո-
սում և անունով կանչում:

Ղեկավարի հետ իր պիոներները բա-
ժանում են իրենց ապրումներն ու հե-
տաքրքրությունները: Չեն վախենում
և չեն քաշվում նրա ներկայությամբ
ասել այն ամենը, ինչ վոր կասեյին
իրար, իրենց պահում են միանգամայն
ազատ:

Վորպես ընկեր, այն ել վորպես լավ
ընկեր, ղեկավարը պետք է չափազանց
ուշագիւր լինի դեպի պիոներները:

Նա պետք է միշտ պատրաստ լինի
լսելու և ոգնելու նրանց հարկավոր դեպ-
քերում:

Գրավել պիոներական կոլեկտիվի համակրանքը, վորպես լավ ընկեր, և լինել այդպիսին—այս է պիոներ-դեկավարի առաջնակարգ նպատակներից մեկը:

Ամեն ջանք թափենք պիոներական կոլեկտիվի կյանքն ու աշխատանքները բարձրացնելու, առողջ ձևերով տանելու համար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0195642

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.